Ուրեմն քանի՜ առաւել գովեստից և շնորհակալեաց արժանի է Մեծ. Պ. Յովսէփ Պ.. Իզմիրեանցն՝ որ նորարծարծ իմն և մեծաշխոյժ եռանդեամբ կուխտէ, ասպարէզ հիջնէ և հրաւիրէ Հայ հեղինակները և գրասէրները՝ որ այսուհետև աշխատին արժանաւոր երկասիրութիւնք մանաւանդ Հայկաբանութեան և Ազգային պատմութեան դասագրեանք պատրաստելոյ, և եթէ պահանջուած պայմաններուն համաձայն լինին (որք ամսագրոյս անցեալ Մարտի թերթին մէջ հրատարակուեցան), ընդունին մրցանակ՝ իւրեանց աշխատութեանց ի պսակ։ Այսպիսի բարի դիտում ունեցող նպատակ և մըրցանակ որքան յարատև և հաստատուն լինի՝ ոչ ապաքէն Պ. Իզմիրեանցի անունը և արդիւնքը անմահ յիշատակութեանց և յաւիտենական փառաց արժանի կը կացուցանէ, և երբ բուն և բարի նպատակը իրագործուի և յարդիւնս ածի՝ սակաւ փառք և մխիթարութիւն նմին պիտի լինի, և աւելց աւելի ի՜նչ վարձ և փառաւոր պսակ կարող է ընդունել։

Սիրելի է մեզ յուսալ՝ որ Պ. Յովսէփ Իզմիրեանցն ինչպէս նա և մի և նոյն եռանդով վառուած Ազգասէր անձինք կըբարեհաճին այսպիսի նպատակը մշտնջենաւորել մի դրամագլուխ նուիրաբերելով և յատկացնելով, որով միանգամայն այլոց բարի և նախանձելի օրինակ կհանդիսանան՝ թէ մասնաւորապէս և թէ ընկերութեամբք այսպիսի վսեմ՝ նշանաւոր և կենսական նպատակ նուիրագործելոյ համար։

Մ.

# ԱԶԳԱՅԻՆ

## ՀԱՇԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ–ԱՐՂՈՒԹԵԱՆՑ Հ. ԴՊՐՈՑԻՆ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւնս օրիորդական Հոգևոր Դըպրոցի Հայոց Աղէքսանդրապօլ քաղաքի բացելոյ յիշխան Դաշհրամանայ Երկայնաբազուկ-Արղութեանց համաձայն 18րդ յօդուածոյ կանոնադրութեան նոյն դպրոցի՝ ընդ այսմ առաքելով ի խըմբագրութիւնդ զտարեկան համառօտ հաշիւ մտից և ծախուց օրիորդական դպրոցիս վասն անցեալ 1874 ամի, խոնարհաբար խնդրէ հրատարակել զայնս յէջս պատուական և ազգաշահ լրագրոյդ Արարատայ ի գիտութիւն համայն հայազանց։

Հոգաբարձուք Յովսէփ Աւ. քահանայ Կոստանեանց
Պ. Յովհանջանեանց
Ռուբէն Մելիք – Ագամեանց
Սարգիս Միրզայեանց

Համ. 5
յ31 Մարտի 1875 ամի
ՅԱղէքսանդրապօլ.

### Ա. Հոգաբարձական մուտ.

Նախագահ Հոգաբարձութեան Դպրոցի Փոխանորդն Թեմին Աղէքսանդրապօլու, չորս հոգաբարձուք, յորոց մինն վարէ զպաշտօն գանձապահութեան և թղթակցութեան, և միւսն զպաշտօն քարտուղարութեան դպրոցի առանց վարձու. երկու կանդիտատք, յորոց մինն ի պատճառս հրաժարման միոյ յանդամոց հոգաբարձութեան՝ եմուտ ի պաշտօն հոգաբարձուի։

Քառասուն պատգամաւորք։

### Բ. Ուսումնական ծախ.

Ուսուցիչք.

| | Ռ. |
|---|---|
| Կրօնուսոյց Հայաստանեայց ուղղափառ դաւանութեան տարեկան . . | 120 |

Ուսուցիչ Հայոց լեզուի, ազգային պատմութեան, աշխարհագրութեան և երգեցողութեան . . . . 700
Ռուսաց լեզուի և բնական պատմութեան . . . 300
Ռուսաց լեզուի և թուաբանութեան 200
Հայոց լեզուի և վայելչագրութեան 180
Գծագրութեան . . . . .
Ուսուցչուհի՝ նոյն և վերակացուհի 120

Աշակերտուհիք

Ձրիավարժ որդեգրուհիք Ղահրաման իշխան երկայնաբազուկ Արղութեանց . 12
Թոշակաւոր որդեգրուհիք բարեպաշտօն անձանց քաղաքիս . . . 18
Թոշակաւոր աշակերտուհիք . . 70

Ծանօթ. Բաց ի վերոգրեալ թոշակաւոր և որդեգրուհի աշակերտուհեաց գտանէին ի դպրոցին յընթացս անցեալ ամի այլ ևս 16 աշակերտուհիք, յորոց տասն իբրև ուսումնաւարտք վկայագրաւ արձակեցան ի դպրոցէն, երկուքն փոխեցան յաշխարհէս, իսկ երեքն ըստ ինչ ինչ ընտանեան հանգամանաց հրաժարեցան յուսմանէ, և միւն տեղափոխեցաւ ի Հռիփսիմեան օրիորդական ուսումնարանն Երևանու.

ԱՌԱՐԿԱՅՔ ՈՒՍՄԱՆ.

1. Կրօնագիտութիւն
2. Հայոց լեզու
3. Ռուսաց լեզու
4. Թուաբանութիւն
5. Աշխարհագրութիւն
6. Ազգային պատմութիւն
7. Բնական պատմութիւն
8. Գեղագրութիւն
9. Երաժշտութիւն
10. Ձեռագործութիւն
11. Նկարչութիւն.

Գ. Ելևմուտ դրամոյ.

Մնացորդ ի 1873 ամէ ց1 Յունվարի ներկայ տարւոյս ընդ մայր գումարոյն ստացելոյ ի հաշիւ կտակաւանդութեան արժանայիշատակ Ղահրաման իշխանի Երկայնաբազուկ-Արղութեանց, որք են տոմսակք արքունի դրամանոցի ամենն . . 28093 5

Մուտք յընթացս 1874 ամի.

Յարքունուստ ստացեալ տոկոսիք տոկոսաբեր տոմսակաց . . 1300
Արտաքին տոկոսիք . . . 186
Թոշակագրամ աշակերտուհեաց . 1501 50
Վարձ ուսումնարանապատկան նուագարանի . . . . 15
Արդիւնք վիճակախաղութեան . 313 35
Ընդ ամենն 31408 90

Արտադրեալ ծախք.

Յայս թիւ վճարեցաւ վասն լրացուցման սկզբնաւորեալ շինութեան ուսումնարանի . . 1500
Ռոճիկք ուսուցչաց . . . 1782 45
Ձեռագործութեան նիւթեղինաց և անձնական կամ ուսումնական պիտոյից երկոտասան որդեգրուհեաց և այլ ուսումնարանական պիտոյից . 713 48
Տան վարձ ուսումնարանի . . 243 32
Ի պէտս հոգացման վիճակախաղական գործոյն ի կողմանէ ժառանգաց յԱպրիլ ամսոյ 1873 ամի ցվերջ 1874 ամի 472 63
Ի գին վառելափայտի . . 63 60
Ի պէտս հանդիսականութեանց 4 76
Ընդ ամենն 4780 24

Զայս գումար ի բաց բարձեալ ի մեծ գումարոյն մնաց ի պատրաստի 26630–66

Ծանօթ. 1. Սկզբնաւորեալն ի հանգուցեալ Ղահրաման իշխանէ երկայնաբազուկ Արղութեանց շինութիւն ուսումնարանական դաստանաց ի շրջապատի սուրբ Նշան եկեղե-

ցւոյ, որ մնացեալ էր ի պատճառս վաղահաս մահուան նորա, հետզհետէ ստանալով զշարունակութիւն՝ մեծ ընդ մեծ է ի կատարելագործութիւն.

2. Ուսումնարանն ունի բերել ի մայրաքաղաքէն Պետերբուրգոյ զանազան ուսումնական գործիք քարտէզք, գրեանք և այլ պիտոյք, զորոց զմանրամասնութիւնն նկարագրել ցուցէ ձանձրութիւն պատճառիցէ ընթերցողաց.

## ՀԱՇԻՒ

# Շ. ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ.

### ՇԱՄԱԽՈՅ.

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Շամախւոյ օրիորդական վարժարանի Հոգաբարձուքս ուղարկելով Խմբագրութեանդ 1874 Թուականում յիշեալ վարժարանի համար եղած մուտքի և ծախքի հաշուեցուցակը, Ընկերութեանըս անդամոց, Խնամակալուհեաց, Ուսուցչաց, ուսանողուհեաց, նուիրատուաց և ուսանելի առարկայից ցուցակի հետ միասին, խոնարհաբար խնդրում ենք Արարատ ամսագրոյդ միջոցաւ հրատարակել ի գիտութիւն ազգայնոց, այս առիթով մատուցանելով մեր ի սրտէ շնորհակալութիւնը թէ խնամակալուհեաց և թէ պատուելի անդամոց.

Հոգաբարձուք Յովհաննէս Խալաթեանց
Գէորգ Խ. Կամծկանեանց
Յարութիւն Տէր Եսայեան

Ի 26 Մարտի 1875 ամ.
Շամախի.

### ՄՈՒՏՔ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Ի 1873 ամէ ի 1ն Յունվարի 1874 ամի մնացորդ գումարն . . | 1479 | 44 |
| Անդամակցական տուրք յանփոփոխ և ի տարեկան անդամոց վճարանին վասն 1873 և 1874 ամաց . | 330 | |
| Անդամակցական տուրք ի Խնամակալուհեաց վարժարանին վասն 1874 ամի . . . . . | 110 | |
| Նուիրատուք ի բարեսէր անձանց յընթացս նոյն ամի . . . | 22 | 50 |
| Թոշակառուաց տուեալք յաշակերտուհեաց յընթացս 1874 ամի . | 147 | 95 |
| Ի խաղարկութենէ լոտոլիայի ըստացեալ է օգուտ . . . | 64 | 94 |
| Ստացեալ է տան վարձ վասն Նոյ. և Դեկտ. ամսոց 1874 ամի . . | 20 | |
| Տոկոսագրաց ստացեալք վասն 1400 րուբ. մայր գումարոց վարժարանին յընթացս 1874 ամի . . | 196 | |
| Գումար | 2370 | 83 |

### ԾԱԽՔ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Ռոճիկք ուսուցչաց և վարժուհւոյ Օրիորդ. վարժ. ի 1874 ամի . . | 418 | 14 |
| Վարձ տան յորում զետեղի վարժարանն վասն 1874 ամի . . | 160 | |
| Ի գին տպագրելոյ անդամակցական տոմսակաց . . . . | 6 | |
| Ի գին գնելոյ զանազան կարևորութեանց ի պէտս ձեռագործաց աշակերտուհեաց և այլ մանրամասնից | 9 | 82 |
| Ի գին գրենաց պարգևաբաշխելոց աշակերտուհեաց . . . | 3 | |
| Յաղագս հրատարակութեանց ի Դուբա ի մասին վարժուհւոյ . . | 2 | 60 |
| Ի գին վառելափայտի ի պէտս վարժարանի . . . . | 19 | |
| Ի վարձ ծառայի և ջուր բերողին . | 5 | 10 |
| | 623 | 66 |
| Մուտք | 2370 | 83 |
| Ծախք | 823 | 66 |
| Առ 1ն Յունվարի 1875 ամի մնայ ուսումնարանական մայր գումար . | 1747 | 17 |

### Ցուցակ

Շամախւոյ Օրիորդական վարժարանի դասատուաց, աշակերտուհեաց, ուսանողուհեաց և աւանդած առարկայից 1874 Յունվ. համար:

ա. Դասատուն. սորա մէջ աւանդվում են Կրօն — հին Կտակարանից, Մանկական աշխարհի Բ.

հասարը միտքը յետ պատմելով, Քերականութեան սկզբունքները Հայոց պատմութիւն Ռուսաց լեզու, Թուաբանութիւն Հայոց և Ռուսաց Վայելչագրութիւն, Ձեռագործութիւն ազգային և եկեղեցական երգեցողութիւն. սորանում գրուած են 2 ուսուցիչ, 14 թոշակաւորք և 4 ձրիաթոշակ աշակերտք։

Նախ- գաւառում սորա մէջ ուսանում են Հայերէն տառաճանաչութիւն և փորձութիւն գրելը միայն եկեղ. և ազգ. երգեցողութիւն. սրանում գտնվում են 2 ուսուցիչ, 19 թոշակաւորք և 8 ձրիաթոշակ աշակերտք։

Նուիրատուք յունուար 1874 ամի.

| | Ր. | Կ. |
|---|---|---|
| Շամախեցի Նիկոլայ Վարդապետեանց | 6 | |
| Շամ. Յովհաննէս Խալափեանց | 1 | |
| Շամ. Համբարձում Իվանեանց | | 50 |
| Շամ. Յարութիւն Եադուբեանց | 2 | |
| Շամ. Յովհաննէս Շահնշեանց | 4 | |
| Գանձապահ Յովհ. Խալափեանցի ձեռամբ զանազան անձինքներից տուած են | 9 | |
| | 22 | 50 |

Անփոփոխ անդամք *)։

1. Սամուէլ Բաղրեանց 2. Յովհաննէս Խալափեանց 3. Յովհաննէս Միրզաբէկեանց 4. Խաչատուր-բէկ Եղիազարեանց 5. Մովսէս Աշուղեանց 6. Կարապետ Քալանթարեանց և 7. Աբրահամ Գասպարեանց **)։

Տարեկան անդամք ***)։

1. Անդրէաս Արքեպիսկոպոս. 2. Սահակ Վարդապետ 3. Մէլքում-բէկ Ավշարեանց 4. Պետրոս-բէկ Տէր Մարկոսեանց 5. Միքայէլ Դարադաշեանց 6. Բաղէշ Սարգիսբէկեանց 7. Պօղոս Ներսէսեանց. Արտէմ Ներսէսեանց 9. Գրիգոր Դիլլարեանց 10. Գէորգ Կածկածեանց 11. Շահնշահ Վլասեանց 12. Յարութիւն Տէր Եսայեանց 13. Միքայէլ Արամեանց 14. Յովհաննէս Իւզբաշեանց 15. Զաւատ Տէր Սանիփանեանց 16 Հայրապետ Դուքասեանց 17. Յարութիւն Տէր Սարգսեանց 18. Աստուածատուր Ջախարեանց 19. Ներսէս Աթաբէկեանց. 20. Բաղդասար Նազարեանց. 21. Սոփիան Թարրայեանց. 22. Գաբրիէլ Ռօմանովսկի 23. Ներսէս Աբրահամեան Տէր Ներսէսեանց. 24. Պետրոս Խաչատրեան Քէշիշ-օղլի. 25. Միսաք Արամեանց. 26. Սահակ-բէկ Սեփերիակեանց 27. Յովհաննէս Շահնշահեանց 28. Պօղ. Շահմիրզ Մելիք-Բէկլարեանց 29. Ներսէս-բէկ Սարումեանց 30. Աննիբաղ Նաջարեանց։

Խնամակալուհիք *)։

1. Մարգարիտ Զօհրաբեանց 2. Զառվարդ Ավշարեանց. 3. Ոսկի Կածկածեանց. 4. Թագուհի Նազարեանց 5. Խանում Խալափեանց. 6. Եկատարինէ Ներսէսեանց 7. Սօնա Ներսէսեանց 8. Մարիամ Նիկիտեանց 9. Զամրադ Քալանթարեանց 10. Մարիամ Իւզբաշեանց 11. Մարիամ Զախարեանց. 12. Մարգարիտ Ավշարեանց 13. Զառվարդ Միրզաբէկեանց 14. Մարիամ Աշուղեանց 15. Մարիամ Յովհ. Տէր-Մարկոսեանց. 16. Խանում Լազարեանց 17 Օվսաննա Եղիազարեանց 18. Եղիսաբէթ Վարդանեանց 19. Մարիամ Լալայեանց. 20. Զառվարդ Լալայեանց. 21. Զառվարդ Գեօզալեանց 22. Փեփրոնէ Աթաբէկեանց. 23. Ոսկի Մկրտչեան Սեբերակեանց 24. Հեղինէ Շահնշահեանց։

ՎՐԻՊԱԿ

Ամսագրոյս փետրվարի տետրակին մէջ՝ յերես 70—71՝ Խնդրոյ Ղեւոնդեան վեր-

(*) Անփոփոխ անդամ համարվում են նոքա, որոնք միանուագ վճարում են հարիւր րուբլի, եւ թէ նոքա, որոնք նոյն գումարը լրացնում են երեք տարուայ ընթացքում:

(**) Այս վերջի անփոփոխ անդամներից 5-րդը, 6-րդը եւ 7-րդը պարտաւորված են հարիւր րուբլին վճարել երեք տարուայ ընթացքում:

(***) Տարեկան անդամ համարվում են նոքա, որոնք իւրաքանչիւր տարի վճարում են տասն րուբլի:

(*) Իւրաքանչիւր խնամակալուհի պարտաւոր է վճարել իւրաքանչիւր տարի հինգ րուբլի: